գում են առնում իրենց իսկ՝ դրամատէրների կողմից։ Տակաւին նրանք չեն խօսում այն — առաւել եւս գործել — ընկերվարացման ու պետականացման մասին, որ իրագործւում է համագործակցօրէն կազմակերպուած սպառողների եւ արտադրողների ձեռքով։ Եւ եթէ Միացեալ Նահանգներում այդ հողի վրայ կազմակերպուած սպառողները դեռ եւս որոշ դեր չեն խաղում ու դրամատէրերի կողմից դրաււում են դէպի մասնատիրական ձեռնարկութիւններ, Եւրոպայում, ընդհակառակը, բոլորովին տարբեր է պատկերը։ Պրոֆ. Keynes զարմանալիօրէն չէ խօսում այդ մասին, այն ինչ հէնց Մեծ Բրիտանիայում է որ՝ համագործակցօրէն կազմակերպուած սպառողները (յաճախորդները) շատ աւելի մեծ չափերով են նպաստել ռամկավարացման եւ ընկերայնացման, քան որ արել են Անգլիական Դրամատունը, Լոնտոնի Նաւահանգիստը, ինչպէս նաեւ ամերիկեան դրամատէրերը, եւայլն։

ԳԵՐՄԱՆ ՃԱՄԲՈՐԴ ՄՈՐԻՑ ՎԱԳՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գրեց՝ ԱՐՏ. ԱՌԵՂԵԱՆ

II

Երեւանից յետոյ Վագնէրի — ինչպէս առհասարակ Հայաստան այցելող ամէն մի ճամբորդի — հետաքրքրութեան առարկան Էջմիածինն է, ուր եւ գերման բնագէտ-ուղեւորը մեկնում է նոյն տարուան մայիս ամսի վերջերին։

Այդտեղ եւս նրան ընկերակցում են ինչպէս խաչատուր Արովեան, այնպէս նաեւ գրեթէ 80-ամեայ գերմանացի բարոն Ֆոն Հալբերգ, դարձեալ Միւնխէնից։ Այս վերջինն էլ ժամանակին ծանօթ է եղած որպէս ճամբորդել սիրող եւ աշխարհէ աշխարհ ման եկող մէկը, եւ սակայն ոչ թէ գիտական նպատակով, այլ պարզապէս հաճոյքի համար։

Պէտք է ասել, որ Էջմիածինը շատ ծանր տպաւորութիւն է թողնում մեր ճամբորդի վրայ, թէ՛ արտաքինով եւ թէ՛ ներքին կենցաղով, որով Վագներ ինքզինքը իր սպասելիքների հանդէպ յուսախաբ է տեսնում։

«Ինչ Էջմիածնի հոգեւորականութեանն է վերաբերում,— ասում է նա,— ես վաղուց էի հրաժարուել նախապէս նրա մասին իմ ունեցած կարծիքից։ Կ. Պոլսում, Թիֆլիսում եւ Հայաստանի մի մասում անցկացրածս միջոցին բաւականաչափ ծանօթացել էի հայ կղերին՝ իր տգիտութեան, արատների եւ տխմար անհամբերողութեան մէջ, որպէսզի նրան ամբողջ հոգով արհամարհել կարենայի»։

Դա այն ժամանակն էր, երբ դեռ նոր էր, ընդամէնը մի քանի շաբաթ առաջ, տեղի ունեցել Ներսէս Աշտարակեցիի ընտրութիւնը (ապրիլ, 1843)։

Եւ Վագներ մնում է զարմացած, թէ Էջմիածին այցելած եւրոպացի հին ճամբորդները ինչպէս է որ լաւ տպաւորութիւն են ստացել այդ վանքից։

«Այն ժամանակները,— ասում է Վագներ,— երբ Tavernier (1665 թ.), Chardin (1672 թ.) եւ Tournefort այս հրաշակաւոր վայրն են այցելել (17-րդ դարու երկրորդ կէսին), կամ այն է որ՝ այստեղ ամէն ինչ անսահմանօրէն աւելի լաւ ու ծաղկած վիճակի մէջ է եղել քան այժմ, եւ կամ այն է որ յիշեալ ճամբորդները խիստ չափազանցրել են։ Tavernier-ի այցելութեան միջոցին (1655) այս ճամբաներով դեռ երթեւեկում էին առեւտրական մեծ քարվաններ։ Սրանք իրենց հետ բերում էին բարեկեցութիւն, ինչպէս նաեւ բազմաթիւ ուխտաւորներ, սրանց թւում էլ շատ հարուստ հայ վաճառականներ։ Վերջիններիս նուէրներով էլ եկեղեցին մեծապէս հարստանում ու պայծառանում էր։ Tavernier զարմացած է մնացել վանքի դանձերի վրայ, որոնց այն ժամանակները պարսիկները եւ տաճիկները ըստ երեւոյթին դեռ ձեռք տուած չեն եղել։ Վանքը այն ժա-